ՆՈՐ-ԴԱՐ

№ 156 ԻՆՆԵՐՈՐԴ ՏՕՐԻ Հ. 10 Հոկտեմբերի

1892

Հ. 10 Հոկտեմբերի ԻՆՆԵՐՈՐԴ ՏՕՐԻ № 156

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., մատով՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9 ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների րոպէին 2 կ., բեկւածների համար կրկնապատիկ։

Հաւատարիմ ս. Մարիամեան օրիորդաց ուսումնարանի վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն Թիֆլիսի հասարակութեան, որ Հոկտեմբերի 11-ին, կիրակի օրը, ժամը 11-ին ս. պատարագից յետոյ կատարւելու է Վանքի ւսագ եկեղեցում՝ լիշեալ ուսումնարանի բարերար Հանգուցեալ

ՅՈՎՍԷՓ ԴԱԻԹԵԱՆ ԱԼԷԼԵԱՆՑԻ

հոգեհանգիստը։ Ուստի խնդրւում է ազգականներին և ծանօթներին չնորհ բերել նշան օրը։ Անձրեւային եղանակին հոգեհանգիստը կլինի տաճարում։

Անգամ վարչութեան՝ Ներսէս ւսագ քահանայ Աբովեանց։

(358). 1—1.

Հոկտեմբերի 1-ից մինչև տարւոյ վերջը «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում և վճարւում են 3 ր. 50 կ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Վիլհելմ կայսրի այցելութեան առթիւ։
Քրոնիկոն.—Վաղուան ներկայացումը։ Մոսկուայից։ Խոլերային քաղաքէդ։ Խոլերայի ընթացքը Թիֆլիսում։ Մանգլիսից։ Ս. Էջմիածնից։
Ռուսիայի Թերւեերում կարդում ենք։
Արտասահմանի հայ Թերւեերում կարդում ենք։
Վաճառականութեան անկման պատճառներից մէկը մեր մէջ։
Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան՝ առողջապահական մասնախումբ։
Քաղաքական. — Քաղաքական լուրեր։
Ֆրանսիան 100 տարւոյ ընթացքում։
Խառն լուրեր։
Հեռագիրներ։
Բանասիրական. — Գրականական աշխարհից, Ա—էրնստ Ռընան։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 9 հոկտեմբերի 1892 թ.

ՎԻԼՀԵԼՄ ԿԱՅՍՐԻ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ.

Այս օրերս եւրոպական մամուլը զբաղուած է գլխաւորապէս եղբայրազարթ կայսր Վիլհելմի իւր դաշնակցին՝ կայսր Ֆրանց-Յովսէփին արած այցելութեամբ։

Մեր ստացած հեռագրերից արդէն յայտնի է «Նոր-Դար»-ի ընթերցողներին, որ Վիլհելմ կայսրը Վիեննայում Ֆրանց-Յովսէփին մի երեք օր հիւր մնալով արդէն Բերլին էվերադարձել։

Ամբողջ եւրոպական մամուլը զբաղուած է այդ այցելութեան գաղտնիքը լուծելու խնդրով։ Պաշտօնական լրագրերը ծանուցին կանխաւ, որ Վիլհելմ կայսրը լոկ բարեկամական այցելութիւն է անում իւր դաշնակցին, հետևաբար քաղաքական ոչ մի նպատակ չունի այդ այցելութիւնը. բայց մանաւանդ և անկախ մամուլը բոլորովին այլ և բազմատեսակ, մէկը միւսից տարբեր մեկնութիւն է տալիս դրան։ Ոմանք ասում են, թէ Վիլհելմն այդ այցելութեամբ ուզում է համոզել Ֆրանց-Յովսէփին այցելելու իտալական թագաւոր Հումբերտին, որի այցելութիւնն ահա քանի տարի է անպատասխան է թողել Ֆրանց-Յովսէփը։ Ոմանք էլ ասում են, թէ Վիլհելմն եկել է Վիեննա, որպէսզի Ֆրանց-Յովսէփի միջամտութեամբ վերջացնի հերցոգ Կումբերլանդի Հանովերի ժառանգութեան խնդիրը։

1866 թուի պատերազմի մի հետևանքն էլ այն էր, որ գերմանական փոքրիկ թագաւորութիւններից մէկը՝ Հաննովերը Պրուսիայի մէջ կուլ գնաց և այդպիսով նրա Գէորգ թագաւորը զահազուրկ եղաւ։ Զահազուրկ Գէորգը մինչև իւր մահն էլ իւր իրաւունքներից չհրաժարուեցաւ, այլ միշտ ըզգում էր Պրուսիայի դէմ և իւր թագաւորական իրաւունքների, հետևաբար իւր գահի վերականգնումն էր պահանջում։ Թէպէտև պրուսական կառավարութիւնը շատ աշխատում էր հաշտութեամբ այնպիսի մի համաձայնութիւն կայացնել, որ Գէորգ թագաւորը կամովին հրաժարուեր Հաննովերի արքայական գահի վրայ ունեցած իրաւունքներից, բայց մինչև օրս այդ գործը գլուխ չեկաւ։

Այժմ, իբրև թէ, Վիլհելմը Վիեննա գալով՝ մտադիր է հանգուցեալ Գէորգ թագաւորի ժառանգի՝ հերցոգ Կումբերլանդի հետ այդ մասին համաձայնութիւն կայացնել։ Ոմանք էլ ասում են, որ Վիլհելմ կայսրը կամենալով Գերմանիայի գօրքերի թիւն աւելացնել և այդ մասին, ինչպէս էլ արդէն յայտնի է, պարլամենտից մեծամեծ գումարներ պահանջել, եկել է իւր դաշնակցին համոզելու, որ նա էլ իւր զօրքերի թիւն աւելացնէ և ընդհանրապէս պատերազմի համար աւելի մեծ պատրաստութիւններ տեսնէ։ Ոմանք աւելի խորհրդաւոր են համարում Վիլհելմ կայսրի այս անգամուայ արած այցելութեան նպատակը։

Քաղաքական դրութիւնը վերջերս մի քանի փոփոխութիւնների է ենթարկուել, որ կարող է առանց հեռանքի չմնալ։ Ֆրանսիան այժմ աւելի ազատ և ինքնագլուխ շարժուձեւեր է անում. Անգլիայում կառավարութեան ղեկը ազատներից անցաւ վիգերի ձեռքը, որոնք այնքան էլ բարեկամ չեն եռապետական դաշնակցութեան. իտալական ժողովրդի մի նշանաւոր մասը, հակառակ կառավարութեան, ուզում է մօտենալ Ֆրանսիային և բաժանուել եռապետական դաշնակցութիւնից.—այդ հանգամանքներն ի նկատի առնելով, Վիլհելմ կայսրն իւր օգոստափառ դաշնակցին նոր առաջարկութիւններ է արել, նոյնոր համաձայնութիւններ կայացնելու համար։

Վիլհելմ կայսրի այցելութիւնը բազմատեսակ մեկնութիւնների նիւթ տալով, իսկապէս ոչ ոք հասատառ ոչինչ չգիտէ, և ինչ որ եւրոպական մամուլի մէջ գրւում է, բոլորն էլ հաւանական ենթադրութիւններ են։

Այնքան պարզ է, որ Վիլհելմ կայսրի այցելութիւնը լոկ բարեկամական քաղաքավարութեան համար այցելութիւն չէր, եթէ ոչ երեք օրուայ ընթացքում ժամանակ չէր պիտի ունենար երիտասարդ կայսրն աւստրիա-ունգարական կանցլեր՝ գրաֆ Կալնոկիին այցելելու և երկար տեսակցութիւն ունենալու նրա հետ, նոյնպէս աւստրիական և ունգարական մինիստր-նախագահների հետ խօսակցելու։

Այդի ընդհատ և այն, որ Վիլհելմ կայսրն աւստրիական մինիստր-նախագահ գրաֆ Տաֆէլի (կայսր Ֆրանց-Յովսէփի մանկավարժական ընկերը) հետ երկար ու սիրալիր խօսակցութիւն ունեցաւ և նրան պրուսական բարձր շքանշանը շնորհեց, այն ինչ երկու տարի առաջ Վիեննայում եղած ժամանակ նրան հասարակ ուշադրութեան անգամ չէր արժանացրել։

Մեզ համար գոնէ պարզ է, որ Վիլհելմ կայսրը յոյժ կարևոր քաղաքական գործերի համար է այցելել Ֆրանց-Յովսէփին, որի հետեւանքներն ուշ, գուցէ շատ ամիսներից յետոյ յայտնուեն։ Պարզ է և այն, որ եւրոպական խաղաղութիւնն այդ տեսակցութիւնից չի խանգարուելու. ընդհակառակն, այդ այցելութիւնը խաղաղութեան գեւ մի գօրաւոր գրաւական է. խնդիրն այն է, թէ մինչև երբ...գուցէ մինչև 1893-ի վերջը։

Շուտով եւրոպական գրեթէ բոլոր պետութիւնների մէջ կկատարւեն պարլամենտական նիստերը և քաղաքական կեանքն աւելի հետաքրքիր ընթացք կը ստանայ։

Առանձին հետաքրքրութեամբ սպասում է անգլիական պարլամենտի բացումը, որտեղ Գլադստոնը իւր իրլանդական հոմ-րուլով հանդէս պիտի գայ, և գերմանական պարլամենտի բացումը, որտեղ սպասում է ամենափառաւոր և հետաքրքիր տեսարանը՝ մեծ Բիսմարկն իբրև քննող և դիմադրող գերմանական այժմեան կառավարութեան գործողութեան։

ՔՐՈՆԻԿՈՆ

Վաղը, կիրակի օրը, հոկտեմբերի 11-ին Աբգուհեանական Թատրոնում հայ դերասանական խումբը ներկայացնում է Հեքիմեանի «Սմբատ Ա.» պատմական պիեսը Օստրովսկու «Աբգիւնաւոր պաշօն» պիեսի փոխարէն, որ չեղարգուած է ուրիշ անգամուան։ Ի նկատի ունենալով, որ մեր ժողովուրդը սիրում է առհասարակ հայոց կեանքից առնուած պատմական պիեսները. յոյս կայ, որ վաղուան ներկայացմանը Թատրոնում շատ հասարակութիւն լինի։

—

Ֆրանսիան էլ զերեզման դրեց մի պատկառելի դագաղ, որի մէջ ամփոփել էր այն մարդու մարմինը, որը մտնուան դիմաւորելիս համարձակւում էր արտասանել այս բառերը. «Ես իմ երկրային կեանքս անցկացրի աշխատիս զարգացման ամենահետաքրքիր ժամանակամիջոցին. այսպէս լմէ այնպէս շատ լաւ դիտեցի այդ շրջանը։ Ինձանից չեղոյ մարդկութիւնը հսկայական քայլեր կանի. սակայն ես կարող եմ անդորը ու բաւական հոգւով

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

II.

ԷՐՆՍՏ ՌԸՆԱՆ

«Գէթ մի րոպէ նշմարտութեանը նաննելու միակ միջոցն այն է, որ մարդս անմեռատուր լինի երբեմն սկեպտիցիզմի, երբեմն հաւատին, երբեմն Յաղրի եւ վերջապէս երբեմն էլ լաւատեսութեան»։

Է. Ռընան, «Feuilles détachées».

—

քնել յաւերժական քնով։ Ոչքան ափերախտ կլինէին, եթէ տրտնջայն բաղդիս դէմ։ 64 տարւոյ ընթացքում հանգիստաւէտ եղայ զարմանալի տեսարանների»։

Ազատ հոգուց բղխած այս համաձայն կատակը կարդացողն էրնստ Ռընանն է՝ Ֆրանսիացի բազմակողմանի և խոր գիտնականը։ Յանձին Ռընանի Ֆրանսիան կորցրեց մի անձնաւորութիւն, որի նմանները զարերով են ծրնում և զարեր են սահեցնում կամ վերակենդանացնում։

Քաղաքակրթի աշխարհը Պանթէոնի կամարների տակ թաղեց Ֆրանսիայի մեծ և սիրելի հրապարակախօսին, եւրոպայի տաղանդաւոր լեզուագէտին, եբրայական ազգի պատմութեան, լեզուի և գրականութեան սիրահարին, և վերջապէս «Վարք Քրիստոսի» նշանաւոր գրուածքի հեղինակին։

Ռընանի գրականական գործունէութիւնը շատ սերտ կապուած է նրա կենսագրութեան հետ և շատ երեւոյթներ նրա գործունէութիւնից պարզուում են նրա մանկութեամբը և կըլթութեամբը։

Ռընանին որոշուած էր մանկութիւնից հոգևորական ասպարէզ. սակայն շատ շուտով նա տեսաւ այդ կոչումը, որովհետև տեսաւ այն մարդկանց, որոնց չեռքին ապահանուել էր այդ կոչման սրբութիւնը։ Ռընանը դուրս էր եկել կաթոլիկութեան ծոցից՝ այն դպրոցից, որն եռանիստ անուանով է միստուած. սակայն նա հալածուած էր կաթոլիկ կղերից մինչև վերջին րոպէն։ Նա ոչ միայն չանցաւոր էր համարում այդ կղերի դատաստանի առաջ, այլ դատճան այն ատելանքը, որ արժանանում էր նոյն իսկ պապի յայտնի հրապարակական հալածանքին։ Աշխատում էին նրան ներկայացնել սերութեան առաջ որպէս մինչև անդամ քաղաքական չանցաւոր, և այդ նրանց յաջողում էր։ Ռընանը գրկուում էր այնպիսի պաշտօններից և ամրիոններից, որոնց նա արժանի էր եղաւանը։

Ռընանը ծնուել է Տրեգիէում՝ կաթոլիկութեան որջերից մինում, որի հիմքը գրուած է V-րդ դարից. և մի քանի դարերի ընթացքում եզուխտական հոգին տեղի էր այդտեղ վանքի չափը չանցած, բայց անկենդան մի բնաիութիւն, որը զուրկ էր աշխարհային ամեն տեսակ բարեմասնութիւններից և վայելքներից, որոնք բոլորն էլ ուննայութիւն էին համարուում կոյսերի վարդապետութեամբ սնուած և կոյս հաւատի զգացման տակ ճնշուած բնակիչների աչքում։ Մեծ յեղափոխութիւնն օդը ցնդեց այդ փոքրիկ քաղաք վանքի հետ միասին, վանականները փախստեամբ ազատեցին երկնց կեանքը, սակայն 18-րդ դարում եզուխտների անյողդողդ աշխատութեամբ նորից վերակենդանացաւ քաղաքը, կիսակործան պատերի վրայ նորից բարձրացաւ մուայլ վանքը իւր սխոլաստիք վարժարանով։

Այսպէս աշն սուացաւ Ռընանն իւր ըստկզբնական կրթութիւնը, այս վիճակուած աշխարհում անցկացրեց իւր պատանեկութեան հասակը (մինչև 16 տարին)։

Իւր «Souvenirs d'enfacne et de jeunesse» ինքնակենսագրութեան մէջ կէս հեգնօրէն, կէս ցաւակցական և մասամբ էլ ինքնաբաւական հոգով, մանրամասն նկարագրում է այդ տարիների կեանքը և այն խիստ կրօնական-սխոլաստիք ուղղութիւնը, որի մէջ ձնչում էր նրա լայն, ազատ հոգին և սահմանափակում էր խորագնին միտքը։ Տարիների ընթացքում սակաւ առ սակաւ եզուխտների կրթարանը դնում էր նրա վրայ իւր կնիքը, որի անբաժան ստուերը կրում էր նա մինչև վերջին վայրկեանը։

«Գրականական և գիտնական ոչ մի ծանօթութիւն չէինք ստանում մեր հոգևոր դպրոցում, պատում է ինքը Ռընանը. մեր գլխաւոր պարապմունքը բարոյական պատուէրներն էին, կոյս հաւատը և սուրբ պատմութեան էջերը, որ առանդում էին մեզ մեր հոգևոր պատխարակները։ Այդ բարոյական քարոզութիւններն երբեմն խոր տպաւորութեամբ մեծ գրաւական էին երևտասարդութեանս տարիների մաքրութիւնը պահպանելու. այնքան խոր են տպաւորուել այդ քարոզների հետքերը, որ ես այժմ էլ սարսափով եմ յիշում։ Այդքան մեծ չէր լինել տը-

ԲԱԺԻՆ

— Ֆրանսիայի նախագահ Ս. Լյուբիեն «Նիզա» թերթի թղթակցին հայտնել է, որ Ֆրանսիայի ներկայ նախարարների մեջ ոչ մեկը չունի որևէ ծրագիր, որ ուզում է իրագործել։ Ներկայ նախարարությունը ստեղծվել է միայն այն նպատակով, որ ընդհանուր ընտրությունների ժամանակ ազատ ձեռք ունենան։ Ֆրանսիայի ներկայ դրությունը շատ ծանր է, ամեն կողմից վտանգներ կան։ Ֆրանսիայի ներկայ նախարարները ոչ մի ծրագիր չունեն, որ կարողանան իրագործել։ Նրանք միայն ուզում են ընդհանուր ընտրությունների ժամանակ ազատ ձեռք ունենալ։

— Ֆրանսիայի նախարարների խորհրդի նախագահ Ռիբոն հրաժարական է տվել։ Նրա տեղը նշանակված է Դուդան։ Նոր նախարարությունը կազմված է հետևյալ անձերից։ Դուդան՝ նախագահ և ներքին գործերի նախարար, Ֆրեյսինե՝ արտաքին գործերի նախարար, Ռուվիե՝ ֆինանսների նախարար, Լեբրեթոն՝ արդարադատության նախարար, Ֆալիեր՝ պատերազմի նախարար, Ռիբո՝ ծովային նախարար, Ռամբո՝ հանրային ուսումնարանների նախարար, Ֆերրի՝ առևտրի նախարար, Ֆուրտու՝ գյուղատնտեսության նախարար, Ռուվիե՝ հանրային աշխատությունների նախարար։

— Ֆրանսիայի նախարարների խորհրդի նախագահ Դուդան հրաժարվել է նախագահությունից և նախարարությունից։ Նա ասել է, որ ինքը չի կարող ընդունել այն պայմանները, որ իրեն առաջարկել են։ Ֆրանսիայի նախագահ Լյուբիեն հրավիրել է Ռիբոյին, որ նորից կազմի նախարարությունը։

— Ռիբոյի նախարարությունը կազմված է հետևյալ անձերից։ Ռիբո՝ նախագահ և ներքին գործերի նախարար, Ֆրեյսինե՝ արտաքին գործերի նախարար, Ռուվիե՝ ֆինանսների նախարար, Լեբրեթոն՝ արդարադատության նախարար, Ֆալիեր՝ պատերազմի նախարար, Ռիբո՝ ծովային նախարար, Ռամբո՝ հանրային ուսումնարանների նախարար, Ֆերրի՝ առևտրի նախարար, Ֆուրտու՝ գյուղատնտեսության նախարար, Ռուվիե՝ հանրային աշխատությունների նախարար։

— Ֆրանսիայի նախարարների խորհրդի նախագահ Ռիբոն հրաժարական է տվել։ Նրա տեղը նշանակված է Դուդան։ Նոր նախարարությունը կազմված է հետևյալ անձերից։ Դուդան

իսկ իրենց մայրենի աշխարհում այլևս նախկին առաջադիմական քայլերը չեն անում և աջողութիւնների չեն հանդիպում։ Օրինակ՝ մեզանում, Կալկասում, ուր գարերից ի վեր երկրի բոլոր առևտուրը գրեթէ ամբողջապէս հայերի ձեռքին էր գտնւում, այժմ նրանք միայն երկրորդական դէր են խաղում այդ ասպարէզում։ Երկրի բոլոր չաստէլա գործերն օտարների ձեռքումն են գտնւում, իսկ հայերը վերջիններիս մօտ գրեթէ միջնորդի դէր են կատարում, ինչպէս ասում են, նրանց ապրանների տակի մնացորդ չեչին մասերը լպստում։

Ինչ է դրա պատճառը։ Մինչէ հայերն այլևս չուրին նախկին առևտրական ձիրքերը և ձգտումները... Ո՛չ, այդ սխալ է և այդ հեռատեսութեան սխալ լինելն երևում է նրանից, որ հիմա էլ, երբ հայի ձեռքը մի քանի «չահեբեսէի» է բնկնում, իսկոյն սկսում է առևտրով զբաղուել, խանութ բանալ։ Ապահով ուրեմն այդ պատճառներն ուրիշ տեղ պէտք է որոնել։

Հայերի մէջ վաճառականութեան անկումը կախուած է շատ պատճառներից, որոնց բոլորի մասին եթէ խօսելու լինէինք, շատ հեռու կըգնար. այս պատճառով էլ մենք սոյն յօդուածում կանգ կառնենք միայն դրանցից մէկի վրայ, որը մեծ դեր է խաղում այդ ասպարէզում։

Վերը ասացինք, թէ այժմս էլ, երբ հայի ձեռքը մի քիչ զրամագլուխ է բնկնում, նա իսկոյն սկսում է վաճառականութեամբ զբաղուել։ Ինչպէս X. տարիների ընթացքում արհեստով զբաղուելով կամ մի որևէ մասնաւոր ապրանքով վարելով ձեռք է բերել մի քանի հարիւր և կամ հազար րուբլի, նա իսկոյն թողնում է իր նախկին պարապմունքը և ցանկանում է ձեռք բերած դրամը օգտաւէտ կերպով շահեցնել, իսկ դրա համար վաճառականութիւնից աւելի շահաւէտ գործ չէ տեսնում։ Ապա, փոքր ինչ մտածելով այն մասին, թէ ինչ իրերի խանութ բանայ, վերջապէս վճռում է «գալանտէրէյնի» ապրանքների առևտրին ձեռնարկել։ Եւ ահա, մի քանի օրից յետոյ, նրան արդէն նստած էք տեսնում իւր նորաբաց խանութում։

Բայց ամեն մի գործ, որ նոր է ըսկըսւում, սկզբում երբէք ոչ միայն մեծ շահ չէ տալիս իւր սկզբում, այլ շատ անգամ վնաս էլ է պատճառում։ Որպէսզի մարդս շահուի իւր սկսած գործից, պէտք է համբերի սկզբնական անաջողութիւններին մի որոշ ժամանակ, որի ընթացքում խանութը յայտնի կըդառնայ, մուշտարիները կըծանօթանան, իսկ ինքն էլ ազնիւ մըրցումն կանի ուրիշ վաճառականների հետ և այլն։ Իսկ մեր վերոյիշեալ պարոնը, անտեղեակ լինելով վաճառականութեան այդ պարզ հանգամանքին, չէ համբերում և ոչ էլ կարողանում է մրցել իւր աւելի փորձուած ըրբացի վաճառականների հետ. նա այնպէս է կարծել, թէ հենց որ խանութը կըբանայ, իսկոյն մեծամեծ օգուտներ կըսանայ, և այժմս տեսնելով իւր հաշիւների սխալ լինելը, նա հենց առաջին անաջողութիւնից յուսահատւում է, սկսում է բոլոր պատճառը առևտրի իւր ընտրած ճիւղի վրայ բարդել, կարծելով, թէ այդ վերջինս բոլորովին շահաւէտ չէ և ենթադրելով գինեվաճառութեամբ աւելի շահուել, խսկոյն ծախում է իւր խանութը (և հարկէ յայտնի չափ պակաս գնով) և գինետուն է բանում։ Կրկին նոյն ըսկըզբնական «քեասատութիւնը», կըրկին նոյն յուսահատութիւնը և անհամբերութիւնը, որոնց վերջն այն է լինում, որ նա լինքն իրեն վճռելով, թէ գինեվաճառութեան մէջ «խէր ու բարաքաթ» չէ մնացել, ծախում է գինետունը, որի մէջ, ինչպէս ասում են, դեռ տեղը չէր տաքացրել։ Ապա մըտածելով «գագեղէնի» առևտրում աւելի օգուտ տեսնել, սկսում է վերջինիս զբաղուել։ Բայց, որովհետև, իւր կարծիքով, շատ բանան ամեն բանում հայածում է նրան և այս անգամ էլ հենց սկզբից իւր սպասած շահը չէ տանում, այդ պատճառով էլ, մի քանի ժամանակից յետոյ, գագեղէնի խանութը ևս նախկին երկուսն օրէն է հետևում, իսկ պարոնը ցորենի-գարու կամ մի այլ բանի առևտուրն աւելի յարմար գտնելով, ձեռնարկում է դրանց... Տարիներ են անցնում, իսկ մեր վաճառականը դեռ ևս վերջնականապէս վաճառականութեան օրևէ ճիւղը բնտրած չէ լինում իւր համար, բայց այդ ժամանակամիջոցում քանի-քանի խանութներ է բացել նա, ինչպէս առևտրով ասես, որ չէ զբաղուել և միշտ էլ անաջող, որովհետև գրանցից ամեն մէկով մի քանի ամիս է զբաղուել և դեռ փոքր ի շատէ յայտնի չեղած, իւր տեղը չտաքացրած, վոխել է առևտրի նիւթը... Այդպիսով, ի հարկէ, նրա սկզբնական գրամագլուխն ոչ միայն աճում է, այլ օր աւուր պակասում և նոյն իսկ բոլորովին անհետանում, այնպէս որ նա վերջ ի վերջոյ ստիպուած է լինում թողնել վաճառականութիւնը և գիմել իւր նախկին արհեստին կամ ծառայութեանը։

Եւ մեր մէջ այդպէս վարուողները ոչ միայն չնչին գումարով գործ սկըսողներն են, այլ նոյն իսկ խոշոր գրամագլուխներ ունեցողները։ Այդպէս են վարուում գրեթէ բոլոր հայ վաճառականները և շատ հազիւ է պատահում, որ նրանցից որևէ մէկին իւր մի անգամ սկսած գործը համբերութեամբ մինչև վերջը տանի, որպէս զի ժամանակի ընթացքում նրա ձեռնարկութիւնը յայտնի դառնալով, աւելի ընդարձակուի և նա աւելի շահ ունենայ։

Երբեմն էլ պատահում է, որ մէկին արդէն առևտրի մի մասնաճիւղը սկըսած լինելով, նրանում բաւարար կերպով առաջանում է, բայց տեսնելով, որ ուրիշները մի այլ մասնաճիւղում նիւթականապէս աւելի են շահում, իւր սկսած գործը զարգացման կէս ճանապարհի վրայ է թողնում և աւելի շատ յետևից բնկնելով, պատահում է, ունեցած բաւարարն էլ ձեռքից բաց է թողնում։ Ահա, վերոյիշեալ հանգամանքներն են պատճառը, որ թէպէտ մեր մէջ էլ կան բաւականաչափ մեծ վաճառականներ, բայց ընդհանուրի հետ համեմատած, գրբանք շատ չնչին տոկոս են կազմում։ Իսկ արտադրող փիրմաները հայերիս մէջ գրեթէ բոլորովին չկան. նոյն իսկ մեր ամենամեծ գրամատէրերն երբէք չեն աշխատում իրենք արտադրել, այլ գրաղում են ուրիշի արտադրածը վաճառելով։

Մի բան էլ, որ մեր մէջ աչքի է բնկնում այդ այն է, որ հայ վաճառականը երբէք օտարների հետ մըրցակից չէ լինում, այլ միշտ հայի հետ է լինում։ Եթէ փողոցները լիքը օսկի լինին և օտարազգիները անգադար հաւաքեն, հայը երբէք նեղութիւն չի քաշիլ, Երանից օրինակ առնելով, յարմար աւելիից օգուտներ և թեքուելով, մի քանի օսկի էլ ինքը վերցնել. բայց եթէ պատահմամբ մի հայ սկսից քար կամ հող ժողովել, այն ժամանակ անցուգարձ անող բոլոր հայերն էլ իսկոյն և եթ վրայ կըթափուեն և առանց մտածելու, մի ակնթարթում փողոցի բոլոր քարն ու հողը ժողովելով, գրպանները կածեն, որովհետև տեսան, որ մի հայ պրանց ժողովում է։ Պետք X. քաղաքում երկար ժամանակ է, որ օտարազգիները պարապում են պատրաստի հագուստներ վաճառելով և այդ հագուստից մեծ օգուտներ են տեսնում, բայց հայերից ոչ մէկը չէ վստահանում գոյն առնարով գրազուել։ Վերջապէս մի հայ քաղաքի մի որ և է մասում պատրաստի հագուստների խանութ է բանում և ահա ուրիշ հայ վաճառականները, որոնք մինչև այդ օրը բոլորովին ուշադրութիւն չէին գարձնում առևտրի այդ ճիւղի վրայ, իսկոյն սկսում են գրանով գրազուել և ոչ միայն մէկը, երկուսը, այլ մի քանի տասնեակ հոգի։ Իսկ ամենագլխաւորն այն է, որ գրանք բոլորն էլ աշխատում են անպատճառ առաջնի մօտ, ինչպէս ասում են—նրա քիթի տակ բանալ իրենց խանութները, չնայելով, որ քաղաքի մի այլ մասում առևտրի հարմար աւելի յարմար տեղեր կան։ Ի հարկէ, այդպիսով վերջիններս միայն իրենց են վնասում և միայն առաջինին նե այդպիսի օրինակներ մենք տեսնում ենք ամեն օր, ամեն բանում։ Ձիշտ են ասում, որ հայը օտարներից միայն մսխելու ձևն է սովորում, իսկ աշխատելունը—ոչ։

Լաւ չըը լինիլ արդեօք, որ մեր հայերը նախ քան մի որ և է գործ սկսելը, լաւ մտածէին այդ մասին և ապա սկսէին։ Լաւ չըը լինիլ, որ վաճառականական ձեռնարկութիւնների աշխատէին ընկերութեամբ սկսել, ինչպէս այդ անում են օտարները, չնայելով, որ նրանց ամեն մէկի գրամագլուխն աւելի է լինում, քան մեր մի քանի վաճառականներինը միասին վերցրած, և ոչ միայն մեծ առևտրական ասպարէզներին, այլ նոյն իսկ ամենաչնչին գրամագլխով մի անգամ մի գործ սկսելով, ամեն սկզբնական անաջողութիւնները համբերութեամբ տարել են և երկար տարիների ընթացքում նոյն գործը շալ ունակելով, հետզհետէ յայտնի են գառել, գնորդները շատացել են, գործն աւելի ու աւելի ընդարձակել և այժմս մեծ կարողութեան տէր են։ Անուններդ չեշելու կարիք չկայ. գրանց ամենքը լաւ ճանաչում են և յոյս ունենք, որ գոնէ այսուհետև մեր վաճառականները կաշխատեն գրանց օրինակին հետևել։

—ԿԷՆ—

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ

Կ. Ը. Բ. Ը. առողջապահական մասնախմբից, Նոր-Բայազիտից, ամսոյս 3-ին ստացանք հետևեալ նամակը.

«Ինչպէս որ նախընթաց նամակով յայտնած էինք, Ղարսայ պ. Նահանգապետի պատուէրին համաձայն, մենք գիւղերը չգնացինք, այլ ախտահան արինք միայն Ղարս քաղաքի վարակուած տները, թուով 114։ Երբ մենք յայտնեցինքմեր պատրաստականութիւնը տները ախտահան անելու, ի հարկէ հրահանգ, խնդրեցինք Ղարսայ պ. ոստիկանապետին, որ մեզ մարդիկ տայ, բանուորներ, և երկու տախտակ էլ ջուր միշտ մեզ հետ լինին։ Պ. ոստիկանապետը կատարեց մեր խնդիրը և երբ վերջացրինք մեր գեզինֆեկցիան, նա մեզ ներկայացրեց մի հաշիւ, որով պահանջում էր վճարել ջրի համար 23 րուբլի։ Մենք մեր կողմից առաջարկեցինք, որ ջրի վճարը մեզանից չպահանջուի և թէ այդ 23 րուբլին մենք կըբաժանենք երկոց քաղաքի ազգատներին, բայց մեր այս ցանկութիւնը չըկատարուեց։

«Ղարսից մենք եկանք Նոր-Բայազիտ. այստեղ էլ խոլերան ոստոխի է եղել. ընդ ամենը 9000 բնակիչ ունեցող քաղաքը մօտ 300 հոգի հիւանդ է ունեցել, որոնցից մահուան զոհ են գնացել 60 հոգի։ Մենք ախտահան արինք վարակուած տները. մի քանի հիւանդներ կային՝ նրանց էլ տարուեց եղած բժշկական և նիւթական օգնութիւնը հասցրինք։ Այստեղ մեր խուրը երկու խմբակի բաժանուեց՝ բժիշկը և բժիշկ—ուստանոզը գնացին Բայազիտի գիւղերը—Երանոց, Բաշքեանդ, Վերագաչի, Ղալե-Կարդաշ, Փոստայ-Մահմեդ, Փոչա-քեանդ. իսկ դեզինֆեկտորշ Ֆերդչենկոյի հետ մենագին քաղաքի տները ախտահան անելու համար։

«Գիւղերում հիւանդները շատ չըկային, բայց եղել են. այնպէս որ բացի հիւանդներին օգնութիւն հասցնելուց, և վարակուած տներն ախտահան արինք. իսկ այլի մնացած կանանց, կամ թէ որբացած երեխայոց, որոնց հայրերը և կամ սննդող ազգականները խոլերայով վախճանուել են, փոշ, թէյ, շաքար էինք բաժանում։

«Ընթերցին այստեղ էլ, ինչպէս ամեն տեղ, արձանագրում էինք ընկերութիւնից մեզ յանձնած յատուկ որթոց մատեանում։

«Բայազիտ քաղաքի ազգատներին էլ բաժանեցինք թէյ, շաքար փոշ և տները, որոնք խոլերայով վարակուած էին, թուով 150, բոլորն էլ ախտահան արինք։

«Եւ այսպէս, վերջացնելով մեր գործունէութիւնը Բայազիտ քաղաքում և նրա շրջակայ գիւղերում, ամսոյս 4-ին յոյս ունինք վերադառնալ Թիֆլիս»։

Այսօր ամսոյս 8-ին, երբ Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան առողջապահական մասնախումբն իրեն ստանձնած գործը նախանձելի եռանդով և սիրով ի կատար ածելով, վերադարձել է Թիֆլիս նրանք (և այդպիսիք բիւրք բիւրոց են), որոնց սրտին մօտ է վերջին ազեսի պատճառով Թշուառութեան գիրկն ընկած ժողովրդի բարօրութիւնը, երկրութեամբ սրտի կ'ողջունեն Բարեգործական Ընկերութեան ստեղծած առողջապահական մասնախմբի բարի գործը։

Եւ մենք մեր կողմանէ, իբրև լիազօր Խորհրդի, սրտի բուռն գգացմամբ, ի պիտոյ Խորհրդի և ամբողջ Ընկերութեան, արտայայտում ենք մեր ապեխախորին շնորհակալութիւնը և երախտագիտութիւնը առողջապահական խմբին՝ բժիշկ Աբելեանցին, բժիշկ-ուստանոզ Արտաշէս Երեմեանցին, Թիֆլիսի տաճկական պատուաւոր քաղաքացի դեզինֆեկտոր Աբչակ Տէր-Գրիգորեանցին, ատեպ-գիելդշեր Միքայէլ Լիտուինենկոյին, նոյնպէս և պարբերական մամուլին և այն բոլոր արգելի անձանց, որոնք համակրանօք աջակցեցին բարի գործին։

Հաւատարմատար Խորհրդի, նախագ. գահ Ընկ. ժող. բժիշկապետ Բ. Նաւասարդեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Ինչպէս լսում է, Կոչուած վտանգաւոր կերպով հիւանդացել է։

—Կ. Պոլսից հեռագրում են, որ Փրանսիական, անգլիական, աւստրիական և գերմանական դեսպանները Բ. Դրանը մի խիստ յայտագիր են ներկայացրել այն մասին, որ Թուրք պատասխանները Կ. Պոլսի և Ադրիանուպոլսի միջև պատից վոտը են յաւիշտակել։

—Նորից լուրեր են տարածւում, թէ Վիլհելմ կայսրն ուզում է հաշտուել իշխան Բիսմարկի հետ։

—Աւստրիայում գերմանացի ապգութիւնների կանգրեսի են հրաւիրում հակա-ազատամիտները քննելու սահմանադրութիւնը գաշնակցական հիմունքների վրայ։

—Բելգիից հեռագրում են, որ գերմանական գօրքին պիտի աւելացնեն 90 հազարհոգի, այնպէս որ զինուորական ծախքերը տարեկան աւելանալու են տպզրում 60, իսկ յետոյ 65 միլիոն մարկի։

—Ֆրանսիական գօրքերը շարունակում են Դոհոմէում յաղթութիւնները տանել։

ՖՐԱՆՍԻԱՅՈՒՆ 100 ՏԱՐՈՒԱՑ ԸՆԹԱՑՔՈՒՄ. *)

(Վերջ)

Երկրի հողագործութիւնն էլ շատ առաջ է գնացել. ահա թուերը. 1789 թուին հացաբոյս ցանել են—4 միլիոն հեկտար տարածութեան վրայ, իսկ 1889 թ. 7 մլր. հեկտար. առաջ մի հեկտարից ստանում էին 8,6 հեկտոլիտր, իսկ այժմ 16,5 հեկտ. ցորեն. առաջ ստացւում էր ընդամենը 40 միլիոն հեկտոլիտր ցորեն, այժմ՝ 110 մլր. հեկտ., հողագործների թիւն առաջ 4 միլիոն էր, այժմ 8 միլիոն. հողագործ մշակի օրավարձն առաջ 0,6 ֆրանկ էր, այժմ 2,5 ֆրանկ. հողագործի տարեկան եկամուտն առաջ 200 ֆրանկ էր, այժմ՝ 800 ֆր.։

Ֆովրկի հարցրած տեղեկութիւններից երևում է, որ հողի բերքն էլ է բարձրացել. 1789 թուին, միջին թուով, մի հեկտարը ծախւում էր 500 ֆրանկով, իսկ այժմ մօտ 1900 ֆրանկով։

Սովորական արդիւնագործող բանուորի վարձն էլ է աւելացել. մինչդեռ գրանք առաջ ստանում էին 1—3 ֆր. օրական, այժմ ստանում են 4—10 ֆր., որ աշագին տարբերութիւն է անում։

Ջնայելով այս ամենին, բայց և այնպէս Հոյչ բնչ համարեա լրիւ միլիոնն է մնացել։ Ահա օրինակ, 4 գրուանքայ կշռով ցորենի հայն արժէքը.

1800 թ.	90 սան.	1850 թ.	70 սան.
1811 թ.	90 »	1863 թ.	65 »
1821 թ.	70 »	1873 թ.	85 »
1832 թ.	60 »	1880 թ.	75 »
1842 թ.	70 »	1887 թ.	85 »

Բացի այս ամենից, ժողովուրդը բաւական լաւ գումար ունի Ֆրանսիական խնայողական գանձարաններում, որ 2½ միլիարդի է հասնում. այդ գումարը գոյացել է բազմաթիւ մարդկանց «սև օրուայ» համար խնայած գումարներից, որոնցից ամենամեծը հազիւ 1000 ֆրանկի է հասնում։ Հետևաբար ամեն մի ֆրանսիացու վրայ գալիս է 66 ֆրանկ՝ հաշուելով նաև ծծկեր մանուկներին։

Ինչ ասել կուզէ, որ երկրի տնտեսական առաջադիմութեան գլխ աւելի ուժեղ գործ է ջրաղացքը. Թէև այդ մասին վիճակագրական տեղեկութիւն չկայ 1789 թուականի վերաբերմամբ, բայց 1810-ի վիճակագրութիւնից երևում է, որ այդ թուին լեցէօններում ու գիմնազիաներում եղել են 21,480 աշակերտները, մինչ 1884 թուին դեռ ևս 89,198 էր, այսինքն 4 անգամից աւելի շատ։ Միմիայն Պարիզում 10,000-ից աւելի ուսանող կայ, այսինքն բարձրագոյն ուսումնարանների՝ Սորբոնի, բժշկական և իրաւաբանական ֆակուլտետների, հանքային, հանապարհների և հաղորդակցութեան, դե-

*) Տես «Նոր-Դար»-ի № 155.

զագործական, պոլիտեխնիքական ուսումնարանների աշակերտներ։ Բացի այդ, կան ամբողջ համալսարաններ Լիոնում, Լիլլում և Մոմպելիէում, ինչ 15—20 քաղաքներում էլ գանազան ֆակուլտետներ գոյութիւն ունին։

—

Ինչպէս ընթերցողը մեր առաջ բերած թուերից տեսնում է, Ֆրանսիան իւր վերջին հարիւր տարուայ ընթացքում աշագին առաջադիմութիւն է գործել. ամեն բան էլ առաջադիմել է, չատ կալուածներն աւելի մարդկանց վրայ են բաժանուած և այն էլ առաւել հայ ւսասարութիւն, հայի գինը մնացել է նոյնը. բայց ժողովրդի գնելու կարողութիւնն աւելացել է, այսքինքն այժմ ոչ միայն հարուստ, բարձր դասակարգը հնարաւորութիւն ունի իւր առօրեայ կարիքները լրացնելու, այլ և հասարակ բանուորը, որ շատ վարձ է ստանում և քիչ ծախսում՝ վողերը «սև օրուայ» համար խնայողական գանձարանում հաւաքում է։

Գոնէ այսպէս է դուրս գալիս Նէյմարկի տուած վիճակագրական տեղեկութիւններից։

Բայց մենք կաշխատենք միւս անգամ դիտել նաև դրամի միւս երեսը և ցոյց տալ նոյնպէս մի քանի շատ հետաքրքիր կողմեր ֆրանսիական կեանքի մասին, որոնք բնորոշ յատկութիւն են կազմում ոչ միայն ֆրանսիացոց, այլ և ներկայ գարիս բոլոր քաղաքակիրթ ազգերի կեանքի մէջ։

Մ. Մ.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փոլեֆ Նուբլի անունով մի պատեր ընթերցողներին զուարճացնելու թէ խաբելու դիտաւորութեամբ հետևեալ պատմութիւնն է հնարել այն մասին, թէ ինչպէս ինքը բարձրացել է Մասիսի գագաթը և գտել է նոյն տապանը։ Այդ պատմութիւնը տպուած է պատեան «L'Univers» թերթում։ Շնորհունակ Նուբլի սարկաւագը սկզբում մանրամասնաբար պատմում է թէ ովքեր կային իւր հետ Մասիսի գագաթը բարձրանալիս, թէ ու՞ր օրն և ու՞ր ժամին էր, որ Նոյի տապանը գտաւ և յետոյ նկարագրում է լեռան դրութիւնը և իւր գիւտի տեղը։ Տապանը նա տեսել է ապրիլի 25-ին կէսօրուայ ժամը 2-ին։ Գիւնը մոտաւոր հաշուում էր, և Նուբլին լեռան գագաթից դեռ հազար ֆուտ ցածր էր գտնուում, երբ «հասարակ աչքով լեռան գագաթին մի առանձին գոյն ունեցող տեղ տեսաւ, որ բոլորովին նման չէր ձիւնի սպիտակութեանը»։ Ձչափ չէ որոշում թէ ինչ գոյն էր այդ և պատմողը չարունակում է. «այդ երևոյթի վրայ սաստիկ զարմացած, ես սկսեցի աչքերիս դէմ, բարձրացայ դարձեալ 200—300 ֆուտ, չուռ եկայ դէպի ձիւնս և բոլոր ուշադրութիւնս կեդրոնացրի այդ մութ կէտի վրայ։ Ես համոզուեցի, որ իմ առաջ գտնւում էր տապանը—մի մեծ նաւ, որի մի մասը դուրս էր եկել ձիւնի տակից և պարզ երևում էր։ Ես պտտեցի լեռան չորս բոլորքը և ամբողջ տապանը տեսայ։ Դա աւելի քան 300 ֆուտ երկարութիւն և 100 ֆուտ բարձրութիւն ունի. մէջ տեղն աղտարակի նման մի բան է շինուած, իսկ կողքերին ծակեր ունի, լուսամուտների պէս. երկու կողմն էլ դեռ ևս երևում են նրա մեացորդները»։ Շնորհունակ սարկաւագն այնուհետև նկարագրում է իւր հոգեկան դրութիւնը տապանը գտնելիս։ Նա գտնում էր «զարմացման անպատմելի դրութեան» մէջ և «երկար ժամանակ լուռ խոհումներում» մէջ էր. բայց միևնոյն ժամանակ չբաւականացաւ «չափել տապանը և առնել նրա ճիշտ ձևը»։ Եկեղեցու պաշտօնեան չուտով է աւելացնել, որ ինքն և իւր ուղեկիցները «կատարելապէս տիրապետում էին իրենց զգայարաններին, որ իրենց տեսողութիւնը ոչնչով խանգարուած չէր և կատարելապէս ճիշտ է, ինչ որ տեսել են»։ Չնայելով վերջին խօսքերին, այնուամենայնիւ «L'Univers» թերթը, որ տպել է այդ անեկդոտը, մի ծանօթութեամբ ասում է, որ պատմութիւնը սարկաւագի պատասխանատուութեանն է թողնում։

—

Նորվեգիայի գրող Իբսէնը ծագում է Շոտլանդիայի արքայական տոհմից։ Նրա տատի տատը—Վենչէ Դիմինգշոնը, շոտլանդացու աղջիկ էր, որի հայրը 1720 թուին տեղափոխուել էր Նորվեգիա։

—

Ինչքա՜ն չկան և չեն եղել Ամերիկայում։ Ֆիլադելֆիայում մի ժամանակ երեք պրոֆեսորներ կային, որոնք «համբոյրների պրոֆեսորներ» էին կոչուում. գրանց աշխատանք էր տովորեցնել, թէ ինչպէս պէտք է համբուրել և, ի հարկէ, իւրաքանչիւրն իւր առանձին ուղղութիւնն ունէր։

—Ո՞ր համբոյրին էք դուք պատկանում,—հարցնում է մի աղջիկ մեւսին։

—Պրոֆեսոր Չեկսոնի համբոյրին։

—Օ՜, հոգեակս, դուք չեա էք մնացել. Չեկսոնն այլ ևս մոգումը չէ. գնացէք պրոֆեսոր Կանտարինի մօտ. նա խտալացի է և նրա համբոյրի մէջ ամբողջ Վեզուվն է ժայթքում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի
ՀԻՒՍԻՍԱԳԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 հոկտեմբերի.—Բացի իւրաքանչիւր տարուայ հաշիւներից, մըտագրութիւն կայ քաղաքային և զեմսկովային հաստատութիւններից պահանջել բոլոր տեղեկութիւնները, որպէս զի մինիստերութիւնը կարողանայ միշտ ճշտիւ իմանալ զեմստվոյի կամ քաղաքի անտեսական գրութիւնը։

«Бирж. Вѣд.»-ն հաղորդում է, որ Փինանսների մինիստրի նախագահութեամբ յանձնաժողով է կազմուած պետական բանկը վերակազմելու համար, նրա առևտրական գործառնութիւնները ընդարձակելու և առևտրական վոխառութեան գործառնութիւնը դիւրացնելու մտքով։ Յանձնաժողովի մէջ կըլինին բանկային գործերին և առևտրի կարիքներին գիտակ անձեր։

Կ. ՊՈԼԻՍ.—Իւրաքանչիւր տարի Բ. Խուռը յայտարարում է, որ Ստամբուլովի Կ. Պոլիս այցելելը ոչ մի քաղաքական բնաւորութիւն չունէր. Բ. Խուռը իւր յարգանքն է արտայայտում Բերլինի դաշնագրին, ցանկութիւն է յայտնում բարեկամութիւն պահպանելու Ռուսիայի հետ և կրկնում է մտերքս ռուսաց կառավարութեանն արած հաւաստիացումները։

ՊԱՐԻԶ.—Ֆրանսիական գեղագետ Դոգսը գահոմէացիների հետ մի քանի հակառակաբանեը ունեցաւ. Նրանց մեծ ջարդ տուից և պատրաստւում է ռմբահոդել գահոմէական մի գործատունդ, որին գլուխ են անցած Թագաւորի Թիկնապահները։

ԲԵՐԼԻՆ, 9 հոկտեմբերի.—Չինուորական օրենագիծը ներկայացուած է մեացեալ խորհրդին. Նրա իրագործման համար պահանջուող ծախքերն հասցրած են 57 միլ., իսկ յետագայում 65 միլ. տարեկան. Ծառայութեան երկամեայ ժամանակամիջոցը Թոյլ է տըրուած։ Կառավարութիւնը պաշտօնապէս յայտարարել է, որ ինքն անպայման կը պնդէ օրինագիծն ընդունելու վրայ. ռայխստագն, հաւանական է, կարձակուի։

ԼՈՆԴՈՆ,—Անգլիական բանկը դիսկոնտը բարձրացրել է 2-ից մինչև 3%։

Կ. ՊՈԼԻՍ.—Սուլթանն ուրբաթ օրն ընդունեց ռուսաց դեսպան Նելիդովին, որը պնդում էր, որ ռուսաց յայտագրին Թուրքաց կառավարութիւնը պատասխան տայ, և յայտնում էր Ռուսիայի դժգոհութիւնը Ստամբուլովին ընդունելու առթիւ։ Սուլթանը պատասխանեց, որ ինքը չէ կամեցել վիրաւորել Ռուսիային, խոստ. պահպանում է Բերլինի դաշնագիրն և յոյս ունի, որ Ռուսիան ոչ մի դժուարութիւն չի առաջացնել Հայաստանում բարենորոգումները մացնելու գործում։ Պ. Նելիդովը պատասխանեց, որ այդ կախուած կըլինի Թիւրքիայի յետագայ գործողութիւններից։ Ռուսաց յայտագրի պատասխանի չորրորդ ծրագիրն է կազմուած։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԻԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Պոստային կառքերի երթևեկութիւնը ռազմա-վիրական տրակտի վրայ։

—

Թիֆլիսից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորւում է առ. ժամը 8-ին, գիշերում է Մչեթի կայարանում, վերադարձ հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7½-ին։

Եօթ հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորւում է կէս օրից յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7-ին։

Վերադարձ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորւում է առ. ժամը 8-ին, գիշերում է Մչեթի կայարանում, Թիֆլիս հասնում է հետևեալ օրը կէս օրից յետոյ ժամը 7½-ին։

Վերից հոգու տեղ ունեցող օմնիբուսն ուղևորւում է կէս օրից յետոյ ժամը 3-ին առանց գիշերելու հասնում է հետևեալ օրը, կէս օրից յետոյ ժամը 7-ին։

ԱՃԾԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ստացուել է հրատարակելի մատենագրական ընկերութեան կողմից հրատարակուելիք գրքերի ցուցակը։ Գինը 1 կոպ. 1—1.

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

կիրակի Հոկտեմբերի 11-ին հայ դերասանական խումբը կրներկայացնէ առաջին անգամ

I.

ՍՄԲԱՏ Ա.

պատմական ողբերգութիւն 3 արարուածով Հեղ. Ս Հէքիմեանի։

II

ԱՅՑ ՔԱՂՋ ՕՑԻՆ

Ֆարս 1 արարուածով, Հեղ, Գ. Երէցփոխեանի։

Կըմասնակցեն՝ տ. տ. Մ'Էլիքեան, Ձերմակեան. պ. պ. Պետրոսեան, Աբրահամեան, Տէր-Դաւթեան, Ա-պայեան, Արաքսեան և ուրիշները։

Տեղերի գինը սովորականն է։

Սկիզբն է 7½ ժամին։

(357) 2—2.

ՍՏԱՑՈՒԱԾՔ ԳՐԱԽԱՆԻ

Առաջին գիրքն ստացուեցաւ Թիֆլիսում և շուտով կուղարկուի բաժանորդներին։

Ա. ԳՐՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆ Է

I. Յառաջաբան—Հրատարակիչ.
II. Յովհաննէս Ամոս Կոմինիոան ու նրա մանկավարժութիւնը. Յ. Բարխուդարեանց.
III. Պարիզի միջնակարգ դպրոցները (Լ. Լ. Մարկովից) Յ. Թ.
IV. Ենայի ճեմարանական մանկավարժական սեմինարիոնը և նրա կազմակերպութիւնը։ Յ. Բարխուդարեանց.
V. Բարոյական փիլիսոփայութիւն — Ս. քահ. Սահակեանց.
VI. Կովկասեան մանկավարժների արդի գերը իրենց տաճկահպատակ ազգայինների գործում. Յ. Տէր-Միրաքեանց.
VII. Համառօտ ծրագիր Ներսիսեան հոգևոր ուսումնարանի գիշերօթիկ սանների դպրոցական ճանապարհորդութեան. Խաչակ Յարութիւնեան.
VIII. Կամքի զարգացումն (հոգեբանական-մանկավարժական խորհրդածութիւններ)։
IX. Լինհարդ և Գերտրուդ գործ Յոյնրիխ Պեստալոցցու Ի. Յ.
X. Գրագիտութիւնը Ռուսաստանի մէջ (վիճակագրական տեղեկութիւններ)։
XI. Պրուսիայի ժողովրդական դպրոցների մասին (վիճակագրական տեղեկութիւններ)։
XII. Բուլղարիայի դպրոցները (վիճակագրական տեղեկութիւններ)։
XIII. Ընդհանուր տեսութիւն մանկավարժական աշխարհից. Մարթօնիկ։
XIV. Ընդհանուր մանկավարժութիւն. Տ. Յիլլեր. Ի. Յ.
XV. Մանկական խաղերի նշանակութիւնը գաստիարակութեան համար։
XVI. Գրախօսութիւններ
1. Աբասխանեանց Աւետիք արևելեան ազգերի հին պատմութիւնը. Բար.
2. Praf. Dr. Lazarus-Jdeale Fragen
3. Bembranbt als Ersiher.
XVII. Մանկավարժական տեղեկութիւններ։
XVIII. Մի քանի խօսք։ Յ. Բարխուդարեանց

«Մանկավարժական գրադարանի» բաժանորդագինն է 2 ր.
Իւրաքանչիւր գրքի անժէքն է 1 ր. 50 կ.

Երկրորդ գիրքը լոյս կըտեսնի դեկտ.։ Բաժանորդագրութիւնը շարունակւում է։

«Մանկավարժական գրադարանի» խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ Іоанесу Бархударянцу Николаевск. ул. № 23 д. Завріева

Հրատարակիչ՝ Յովհաննէս Բարխուդարեանց. 4—4.

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET CIE

ՆԱՒԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղիղ երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, յունուարի 25/6-ի չորեքշաբթի օրուանից սկսած և ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ։

Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան ամսակաները սովորական գինովն ունին։

Բաթումից մեկնում է չորեքշաբթի, 14/26 Հոկտեմբերի շոգենաւ Սիրկասի կապիտանը՝ Բոշէլ։

Հաստատուած կարանտինային միջոցների պատճառով շոգենաւի մեկնելու ժամանակը կարող է փոխուել. ուստի այդ մասին և ուրիշ տեղեկութիւններ ստանալու համար բարեհաճում են դիմել ագենտները

Բաթումում—պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Նաբերեժնայա։ ին

Թիֆլիսում Պ. Ս. Գ. ՊԱՐԵԿԵՆՏԱՆԵԱՆ Հայոց փողոց, տան նախկին գեներալ Տէր-Առաքելբեանցի.

Բագուում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կոլիբեակինսկայա հրապարակ։

Նովորոսիյսկում—պ. ԼՈՒԻ ՌԵՆՕՅԻՆ։

(129) 20—17.

(M.) 6 18

Дозволено цензурою. Тифлисъ 9-го Октября 1892 г. Տպարան «Կաւկազ» լրագրի Типографія, «Кавказъ» Гол. пр. домъ Читахова.